



**ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ Ս. ԶԱՏԿԻ ԱՌԹԻՎ  
ԽՈՍՎԱԾ ՄԱՅՐ ՏԱԺԱՐՈՒՄ, ԿԻՐԱԿԻ ՄԱՐՏԻ 26-ԻՆ**

Յանուն Հօր և Որդու և Հոգուն Սրբոյ:  
Ամեն:

«Քրիստո յարեա ի մեռելոց»:

Ամեն տարի Հայաստանաց առաքելական սուրբ Եկեղեցին ցննությամբ կտոնե սուրբ Զատիկը՝ հիշատակը մեր Փրկչի լուսափայ հարության:

Ամեն տարի գարենան լուսաբացին, վերանորոգյալ հավատքով կողջունենք ավետիսը Քրիստոյի հարության, իբրև լուսաբացը մեր հոգեկան գարունին:

Արդարն, բոլոր անոնց համար, որոնք կրթականին իրողությունը և ճշմարտությունը մարդկային հոգեկան աշխարհին, իրողությունը և ճշմարտությունը ոգեկան արժեքներուն, և բարոյական սկզբունքներով, Քրիստոյի հարությունը առանցքը կհանդիսանա այդ հոգեկան աշխարհին, սկզբանվորող և բեղմնավորող ոգեկան արժեքներուն՝ ո հան վեմը և գերագուն երաշխիքը բարոյական ճշմարտություններուն:

Հարության գաղափարը մարդկային ընկերային պատմական կյանքի բազմահազարամյա փորձի արգահին է՝ լիությամբ ու պայծառությամբ բյութեղացած Քրիստոյի

հրաշալի հարությամբ ու հոչակված սուրբ Ավետարանի Սատվածաշունչ մատյանով, որ մարդկությունը ողողած է անսպառ լուսով և լեցուցած զայն պանծալի իրագործումներով, ահա երկու հազար տարիներն ի վեր:

Սատված լիապես ու ամբողջապես հայտնվեցավ մարդկային աշխարհին՝ Իր միածին Որդվով՝ Քրիստոսով:

Քրիստոս, Իր ծնունդով, երկիր բերավ խօսքը Աստոծ և Իր հարութենեն հետո երկիր թողուց շնորհաբաշին սուրբ Հոգին Աստոծ։ Ահա թե ինչո՞ւ Քրիստոսի հարության ավետիսը սկզբն է հավատացյալի բոլոր որախություններուն, ստուգությունը փրկության մեծ հույսին, գերագուն երաշխիքը հոգու անմահության։

Այսպես է, որ մեծ առաքյալը իրավամբ կգոչն՝ «Եթէ Քրիստո չիցէ յարուցեալ ընդունայն է քարոզութիւնն մեր. ընդունայն են և հասաք ձեր» (Ա. Կորթն. ԺԵ. 14):

Քրիստոսի հարության լուսը ողողեց հան աշխարհը Հայոց և հիշատակության արժանի իրագործումներով լեցուց պատմությունը մեր ազգին։

Այդ լուսով, մանավանդ, մեր ժողովուրդը իր հոգին պեղեց, իր հնքնությունը գտավ, հնքինք կերտեց՝ սկսալ չորրորդ դարու սկզբներեմ հոգնոր, մշակութային և քաղաքական մեծ նվաճութերով։

Հոգնոր նվաճում հաղթահակը նոր ուսում և Փրկչի հջման տեսիլքը ս. Գրիգոր Լուսավորչին։

Մշակութային նվաճում հայ տառերու զյուտը և հայերեն թարգմանությունը Աստվածաշունչ մատուցեն։

Քաղաքական նվաճում ճակատամարտը Ավարայրի։

Սասպես ծնավ ու կազմավորվեցավ հայ ժողովուրդը իբրև ոգեկան իմացական հավաքական մատուցություն։

Սասպես լուսավորվեցավ ու զարգացավ անոր ստաքերությունը պատմության ընթացքին։

Հայ ժողովուրդը, մեր օրերուն ալ, միշտ նոյն ոգեկան իմացական հիմքերու վրա կշարունակել իր երթը քաղաքակիրթ ազգերու կողքին։ Ժամանակը և նորագոյն պատմաները կյանքի՝ էապես ոչինչ չեն խարթարած անոր հոգեկան աշխարհին մեջ, անոր ստեղծագործ խոյանքին մեջ, դեպի պատգան անոր հայրենաշեն սպասութերուն մեջ։

Տեսիլքը սուրբ Լուսավորչի, գյուտը սուրբ Մեսրոպի և հրամանը Կարմիր Վարդանի կմնան, հետոքիւն սուսակել փայլատակումով, ոգեշնչողը բոլոր հայ սրբերուն, վերածնած մեր հայրենի երկրին մեջ, ինչպես և հայ ափոյուրի տարածքին վրա, որ մեր պանդուխա զավակները իրենց հոգին բոլոր թելերով անքակտեի կերպով կապված կմնան իրենց քրիստոնեական հավատքի գերագոյն կեդրոն, աստվածակառուց սուրբ Եղիշեածին և սուրբ գրական երկրին։ Հայատան։

Զատիկի է այսօր, սիրելի հավատացյալներ։ Հավատքի, լուսի և հուսի տոն է այսօր։ Որովհետև «յարեա Քրիստոս ի մեռնոց», որովհետև «մահուան զման կոխնեաց» և «մեզ զիեանս պարզենաց»։ Այս, ճշմարտավես հարություն առավ Քրիստոս, ճշմարտավես հաղործց մահվան, ու ճշմարտավես կյանք պարզենց մեզի։ Սակայն արթուն վլլանք հոգիով, և չխորհինք, թե քավական է րոկ հավատապ այս ճշմարտություններուն ու գոհացուն գտնել ինքնարապ կրավորական կեցվածքի մը մեջ, կարծելով, թե ապահոված են մեր հոգներու արդարացումը, մեր կյանքը, մեր փրկությունը։

Աստվածորդին՝ Քրիստոս, պատմականուն մեկ անգամ հարություն առավ, այս, և ընդմիշտ հաղործց մահվան, կյանք պարզենով մարդուն, սակայն որպեսի մեզմեն ամեն

մեկը արժանի ու մասնակից դառնա այդ շնորհներուն, պետք է տևապես իր կյանքի ընթացքին Քրիստոս կրէ իր արտին մեջ, տևապես մաքանի մեղքին դեմ, տևապես բարին գործե, կարենալ հասնելու համար հարության ապրում բարձութին։ Մահվան արժանության չափը է, անոր միջզբը՝ մեղքը։ Չարին հայողեալով, մեղքը խափանելով է, որ ամեն մեկուն հոգեկան աշխարհին մեջ Քրիստոս կրեա հարություն առնել։ Մեր հավատքով, մեր կյանքի բարի ու արդար գործերով, չափիքին դեմ մեր արհությամբ պիտի կարողանանք արժանանալ Քրիստոսի հարության լուսին, անոր շնորհներուն։ Պողոս առաքյալ կիլայք՝ «արդ ազատացեալք ի մեղացն և ծառացեալք Աստուծոյ ունիք զպտու ձեր ի մեղացն և ծառացեալք Աստուծոյ՝ ունիք զպտու ձեր ի մեր արդարին, և վախճան նորա կեանք լահտենից։ Զի թոշակ մեղաց մաս է. այլ շնորհը Աստուծոյ կեանք բահտենից ի Քրիստոս Յիսուս ի Տեր մեր» (Հոռմ. Զ. 22–23)։

Եվ այն, ինչ ճշմարիտ է մեր ազգի զպավաներն ամեն մեկուն համար առանձին, ճշմարիտ է հայ մեր ամբողջ ազգին համար, իբրև հավաքական ամբողջություն, իբրև եկեղեցի և ժողովուրդ։ Հայ ժողովուրդը իր կրոնական հավատքով, իր նայր եկեղեցիով, իր մշակությով և մեր օրերու իր ազգային-հայրենական վերածնունդով, հոգնոր, մշակութային, բարդական ամբողջ մըն է, ապրող, աճող ու ստեղծագործող մարմին մը՝ ոչ միայն կյութեղեն, այլ մասնավանդ հոգեկան։

Այդ հավաքական հոգին է, որ պիտի պահենք Քրիստոսի հարության լուսին մեջ, Ավետարանի ոգեկանության շողակարություններքո, որպեսի մեր ժողովուրդը շարունակեն ուղիղ գծով ընթանալ մեր լուսաբնակ համեմաց ճամփու։

Դարձեր կանցնին, ժամանակները կիոնուին, սերունդներ կու գան ու կերթան, արտաքին նոր պայմաններ կյանքի կկոչվին, սակայն վալերական ազգի մը հոգին, ինքն ալ թեն հարաշարժ ու մշտանորդ, կպանն ու կպահապեն իր սկզբնական անհատականությունը, ըլլալու և գործելու իր սեփական ոճը, կյանքն ու աշխարհը ընկալելու իր ուրուն կերպը, այնպես, ինչպես դարավոր կաղնին թեն ամեն տարի իր ոստերն ու տերսները կիոնեն, բաց իր արդունը միշտ կատանա իր միևնույն արմատներնեն։ Ժողովուրդի մը պատմությունը խորքին մեջ պատմություն է՝ իր հոգեկան ուժերը կենապործելու անահմանորեն պայման կերպերուն։

Արդ, սիրեցյալ զավակներ Մեր, աղործեցեք և արթուն մնացեք, և գործեցեք այնպես,

ուր Քրիստո չմեռնի ձեր հոգիներեն ներս,  
ուր Քրիստո չմեռնի մեր ժողովորդի գի-  
տակցության ու պատմության մեջ: «Զհոգին  
մի շիշուցանէք»՝ կպատգամե մեզի Պողոս  
ստուացյալ: Քրիստոսի հարության ստոգո-  
ւորյամբ, Քրիստոսի հարության լուսով հա-  
յվեան վառ ու անշեշ պիտի պահենք մեր հո-  
գիները: Զի «յորժամ Քրիստո յայտնեսցի՝  
մկեանքն ձեր, յայնիւմ և Դուք ընդ նմա  
յայտնեսցիք փառօք» (Կողոս. Գ. 4):

Զատիկ է այսօր, սիրելի հավատացյալ  
ժմողովորդ, տոնը Քրիստոսի լուսափալ հա-  
րության, մսիթարությունը և ուրախությունը  
մեր, կենարար հույսը մեր լինելիության և  
հավերժության:

Ամոր փարած ձեր առաքելական սուրբ  
Տեկեղեցին, Մայր Աթոռ սուրբ Էջմիածնին և  
ձեր սրտերուն մեջ վառ ու պայծառ պահած

անմար ջամը հայության հոգին, աճեցեք,  
քազմացեք ու զորացեք Աստուծո օրինու-  
թյան ներքո:

Եվ այսօր, գատկական այս լուս առա-  
վոտյան, թերկրյապ հոգիներով բարձր երգե-  
ցեք ու փառարաննեցեք Արարիչը լուս և  
առաջին Լուսը մեր՝ զհարուցյալ Փրկիչն մեր  
Քրիստոս:

«Փառք հրաշափառ յարութեան Բո Տէր»:

Լուս և խաղաղություն համայն աշխար-  
հին, բոլոր ժողովորդներուն:

Լուս և խաղաղություն մեր հարազատ ժո-  
ղովորդին և նոր կյանքի կոչված, վերաշի-  
նող ու կենսուրախ մեր մայր երկրին, արևա-  
շող, համերժական Հայաստանին:

Լուս և խաղաղութին և շնորհիք Տեառն մե-  
րու Յիսուսի Քրիստոսի նորիցին ընդ ձեզ  
այժմ և յախտեան: Ամէն:

